ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

09.07.2016թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 32-ը:

Նիստին մասնակցում էին նաև ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ԵՊՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյանը, ռեկտորի աշխատակազմի ղեկավար Ա. Ղարիբյանը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվություն 2016թ. ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության իրավիճակի մասին:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

2. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման 2016թ. հարցման արդյունքների մասին:

   Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

3. ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման 2016թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների քննարկում:

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

4. ԵՊՀ ԻՄ-ի 2017թ. ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում (առաջարկություն ԵՊՀ-ի գիտական խորհրդին):

Զեկուցող՝ տնօրեն Ս.Ա. Առաքելյան

5. Ընթացիկ հարցեր:

5.1 ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կառուցվածքային փոփոխություններ կատարելու մասին:

5.2 ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հարություն Ալեքսանի Մարզպանյանի, Ռ. Մարկոսյանի, Ն. Խաչատրյանի «Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը» համահեղինակային աշխատությունը հրատարակության երաշխավորելու մասին:

5.3 ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Վահագն Վարազդատի Գրիգորյանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Երջանիկի Ոսկանյանի «ՀՀ տնտեսական աշխարհագրություն» ուսումնական ձեռնակի հրատարակության երաշխավորելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին՝</u> Տեղեկատվություն 2016թ. ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության իրավիճակի մասին հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ չնայած պաշտոնական տվյալները հրապարակվելու են հուլիսի 15-ին, հայտնի են ԵՊՀ ԻՄ ընդունվող ուսանողների նախնական թվերը: Նա կատարեց 2015թ.-ի և 2016թ.-ի ԵՊՀ ԻՄ դիմորդների տվյալների համառոտ համեմատական վերլուծություն: 2016 թ.-ին ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների ընդհանուր թիվը, ըստ առաջին և երկրորդ հայտերի եղել է 228 հոգի (2015թ.-ին եղել է 208 հոգի), որից աղջիկ՝ 164, տղա՝ 64: Այդ դիմորդներից 31 հոգի ստացել է անբավարար գնահատական և դուրս է մնացել մրցույթից, իսկ 197 հոգի ստացել է դրական գնահատական (2015թ-ին՝ 168 հոգի): Այս թվերը վկայում են այն մասին, որ աճել է ԵՊՀ ԻՄ –ի նկատմամբ հասարակության վստահությունը, ինչպես նաև աճել է առավել պատրաստված դիմորդների քանակը:

Նախնական տվյալների համաձայն՝ դրական գնահատականներով դիմորդների աճ ունենք հետևյալ մասնագիտություններով.

- «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ 29 հոգի (2015թ.՝ 21 հոգի)
- «Քարտեզագրություն և կադաստրային գործ»՝ 26 հոգի (2015թ.՝ 23 հոգի)
- «Հայոց լեզու և գրականություն»՝ 16 հոգի (2015թ.՝ 15 հոգի)
- «Սերվիս»՝ 14 հոգի (2015թ.՝ 8 հոգի)
- «Տնտեսագիտություն»՝ 20 հոգի (2015թ.՝ 15 հոգի)
- «Պատմություն»՝ 13 հոգի (2015թ.՝ 12 հոգի):

Աննախադեպ էր դիմորդների թիվը նոր բացված ‹‹Տարրական մանկավարժություն և մեթոդիկա›› մասնագիտությամբ՝ 43 հոգի (նախատեսված 39 տեղի փոխարեն):

Ըստ նախնական տվյալների դրական գնահատականներով դիմորդների թվաքանակի նվազում ունենք հետևյալ մասնագիտություններով.

- ‹‹Ֆրանսերեն լեզու և գրականություն››՝ 3 հոգի (2015թ.՝ 7 հոգի)
- ‹‹Անգլերեն լեզու և գրականություն››՝ 17 հոգի (2015թ.՝ 28 հոգի)
- ‹‹Հոգեբաություն››՝ 2 հոգի (2015թ.՝ 14 հոգի)
- ‹‹Համակարգչային գրաֆիկա››՝ 7 հոգի
- ‹‹Դիզայն››՝ 7 հոգի:

Նշենք, որ Կիրառական արվեստի ֆակուլտետում 2015թ. դրական գնահատական էր ստացել 21 հոգի:

Շատ մտահոգիչ է ‹‹Հոգեբանություն›› մասնագիտությամբ դիմորդների քանակը, որտեղ թափուր են մնացել նաև անվճար հատկացված տեղերը և շահավետ չի համարվում այդ մասնագիտությամբ ուսուցման կազմակերպումը. կարելի ենթադրել, որ աշխատաշուկայում տվյալ պահին չկա հոգեբանների կարիք: Մտահոգիչ է նաև ‹‹Ֆրանսերեն լեզու և գրականություն›› մասնագիտությամբ դիմորդների սակավության հարցը՝ չնայած այն հանգամանքին, որ Իջևանը համարվում է ֆրանկոֆոն քաղաք ֆրանսիայի Վալանս քաղաքի քույր քաղաքը: Նշվեց, որ այս հարցով մասնաճյուղը ժամանակին դիմել էր ինչպես ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանությանը , այնպես էլ ՀՀ ԿԳ նախարարին:

Արտահայտվեց – ՄԿՊԿ բաժնի վարիչ Վ. Աղաբաբյանը: Նա նշեց, որ վերլուծությունները վկայում են, որ տարածաշրջանից ԵՊՀ դիմել են միայն այն մասնագիտություններով, որոնք չկան ԵՊՀ ԻՄ –ում:

Որոշեցին

Որոշում 17/1

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման 2016թ. հարցման արդյունքների մասին հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, զեկույցը ներկայացվում է ամբողջությամբ /Հավելված 1/:

Որոշեցին

Որոշում 17/2

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երրորդ</u>՝ ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման 2016թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների քննարկում հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ 2016թ. մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցմամբ ամփոփիչ ատեստավորումը իրականացվել է սահմանված ժամանակահատվածում, խոշորացվել են պետական քննության հարցերը, և սահմանափակվել է դրանց թիվը (առավելագույնը՝ 60): Վերոհիշիալ կրթական ծրագրերով ավարտել են թվով 350 ուսանողներ (2015թ.՝ 192), որից 161-ը հեռակա ուսուցմամբ (188-ը՝ նախորդ տարի): Մասնաճյուղում վերոնշյալ կրթական ծրագրերով գերազանցության դիպլոմ ստացել են առկա ուսուցման համակարգի 21 ուսանող: 2015թ.-ին առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով շրջանավարտ չենք ունեցել: Հավելված 2-ում և 3-ում՝ աղյուսակի տեսքով, ըստ մասնագիտությունների, ներկայացված են առկա և հեռակա ուսուցման՝ 2015-2016 ուստարվա ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության մասին թվային տվյալները:

Նա նշեց նաև, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները ընդհանուր առմամբ գոհ են եղել շրջանավարտների պատրաստվածության մակարդակից:

Որոշեցին

Որոշում 17/3

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ՝</u> ԵՊՀ ԻՄ-ի 2017թ. ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում (առաջարկություն ԵՊՀ-ի գիտական խորհրդին) ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նախ շնորհակալություն հայտնեց ԵՊՀ-ի ռեկտրին և ԵՊՀ-ի մյուս ներկայացուցիչներին ԵՊՀ-ի գիտական խորհրդում ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության մասնագիտությունների ցանկը ամենամյա քննարկելու համար: Նա նշեց, որ Հումանիտար գիտությունների ֆակուլտետում մտահոգություն կա ‹‹Հոգեբանություն›› մասնագիտության պահպանման հետ կապված, ինչպես նաև պատմություն մասնագիտությամբ ուսանողների ընդունելության քննությունների թեթևացում է անհրաժեշտ, որոշ առարկաներ կարելի է դնել ‹‹ ** ››- ի տակ: Տարածաշրջանում կա ‹‹Ռուսաց լեզու և գրականություն›› առարկա դասավանդող մասնագետների պահանջարկ, իջել է ռուսաց լեզվի իմացության ընդհանուր մակարդակը: Կարծում ենք, որ ‹‹Սոցիալական աշխատաք›› մասնագիտությունը ևս կարող է պահանջարկ վայելել: Վերջին տարիներին պարբերաբար նվազել է «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ կրթություն ստանալ ցանկացողների թիվը, ինչը պայմանավորված է ֆրանսերենով ուսուցում կազմակերպող դպրոցների նվազումով: Այս տարի նվազել է նաև «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության դիմորդների թիվը: Այդ պատճառով նպատակահարմար է կազմակերպել ուսուցում մեկ մասնագիտությամբ՝ օտար լեզուներ՝ թե

անգլերեն, թե ֆրանսերեն լեզուներով: Զուգահեռաբար խորացված կուսուցանվեն և ֆրանսերենը, և անգլերենը՝ առանց այդ լեզուներից որևէ մեկին առաջնություն տալու:

Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկը առավել լիարժեք բավարարելու նպատակով Տնտեսագիտության ֆակուլտետում կա նոր մասնագիտության խնդիր՝ ֆինանսների կամ կառավարման ոլորտում, պետք է առավել մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարել:

ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետում նույնպես կա մասնագիտությունների վերանայման խնդիր. վերջին տարիներին պարբերաբար նվազում է դիմորդների թիվը:

Արտահայտվեցին – ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ԵՊՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մարկոսյանը:

ԵՊՀ-ի ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ը մեծ աշխատանք է իրականացնում տարածաշրջանում որակյալ մասնագիտական կրթություն իրականացնելու համար և շատ ակտիվ համագործակցում է ԵՊՀ –ի հետ: Նշվեց, որ ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցների կատարողականը շատ բարձր է, որը շատ գովելի է, ժամանակն է ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի 90 տոկոսը տեղացի կադրերով ապահովելու, որին կարելի է նպաստել ԵՊՀ-ում մասնաճյուղի ուսանողներին նպատակային տրվող մագիստրական տեղերը շատացնելու միջոցով: Պարոն Հ. Ժամհարյանը նշեց, որ ԵՊՀ-ում կատարվող գործընթացների ավտոմատացման գործընթացը պետք է կազմակերպվի նաև ԵՊՀ ԻՄ-ում:

ԵՊՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյանը անդրադարձավ քննարկվող բոլոր հարցերին, մասնավորապես նշեց, որ մասնաճյուղում աշխատանքները կատարվում են բարձր մակարդակով, ընդունելության մակարդակը լավ է: Նա նշեց, որ ՀՀ բարձրագույն բուհերի բոլոր մյուս մասնաճյուղերում միասին ընդունվել է այնքան դիմորդ, որքան ԵՊՀ ԻՄ-ում: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ –ում 2017թ.-ի ընդունելության մասնագիտությունների հետ կապված խնդիրները պետք է լավ ուսումնասիրվեն և քննարկվեն, ինչպես նոր այնպես էլ գործող մասնագիտությունների հետ կապված, կարելի նաև իջեցնել որոշ մասնագիտություններով ընդունելության պահանջները:

Ամփոփիչ ատեստավորմում կարելի է կատարել պետական քննությունների և/կամ ավարտական աշխատանքների կատարմամբ, այդ հարցը քննարկվում է նաև ԵՊՀ –ում և հնարավոր է լինեն փոփոխություններ, կրթական ծրագիրը մեզ այդ հնարավորությունը ընձեռում է:

Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը շեշտեց, որ թիվ մեկ խնդիրն այսօր ԵՊՀ ԻՄ-ը տեղացի կադրերով ապահովելն է, որը կարելի է լուծել մի քանի եղանակներով.

- նպատակայն անվճար մագիստրանտների հետ կնքել պայմանագիր, որպեսզի նրանք պարտավորված լինեն սովորելուց հետո աշխատելու մասնաճյուղում,
- զարգացնել հեռավար ուսուցումը, որոշ դասընթացներ կազմակերպել օգտվելով հեռավար ուսուցման գործիքակազմից:

Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը կարևորեց նաև տեղացի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացը մասնաճյուղում կազմակերպելու հարցը:

ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը անդրադարձավ օրակարգի բոլոր հարցերին և կատարեց ընդհանուր վերլուծություն: Մասնավորապես նշեց, որ այս տարի ընդունելության վիճակը հանրապետությունում վատ է՝ բացառությամբ ԵՊՀ ԻՄ-ի, և առաջիկա տարիներին այն ավելի վատ է լինելու: Դիմորդների թվի նվազումը կարող է առաջացնել ֆինանսական խնդիրներ, որն էլ իր հերթին կհանգեցնի հաստիքների կրճատման: Մյուս կողմից՝ հանրապետությունում գործում են մոտ 27 պետական և 34 մասնավոր բուհեր, որը մեր հանրապետության համար շատ մեծ թիվ է, և գործունեության իրավական դաշտը հստակ չէ, որն էլ ավելի է սրում իրավիճակը: Աշխատաշուկան ձևավորված չէ, չկա ոչ մի օրինաչափություն, ճիշտ կանխատեսելը շատ դժվար է: ԵՊՀ- ում շատ վատ է վիճակը «ֆիզիկա», «Քիմիա» մասանգիտություններով, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ դիմորդների թիվն աճել է, պատճառները հայտնի չեն: Շատ լուրջ է ռուսերենի վիճակը, պետք է ուժեղացնենք ռուսաց լեզվի դասավանդումը, մասնագիտություն պահելը շատ դժվար կլինի: Ընդհանուր առմամբ կա լեզվի բարձրորակ կադրերի, դասավանդման նոր մեթոդների խնդիր: Լեզուների ուղղությամբ լուրջ քայլեր պետք է ձեռնարկել:

Ռեկտոր Ա. Սիմոնյանը կարևորեց նաև դպրոցների հետ տարվող աշխատանքները, նշեց, որ պետք է ունենալ հենակետային դպրոց և պահել ամենօրյա ուշադրության կենտրոնում: Նա կարևորեց նաև պրակտիկաների օպտիմալ կազմակերպման խնդիրը: Ռեկտոր Ա. Սիմոնյանը շեշտեց, որ տեսական ու գործնական դասընթացների համագործակցությունը պետք է հիմնված լինի մեթոդաբանության վրա:

Ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, նաև, որ ԵՊՀ ունի հեռաուսուցման կազմակերպման անհրաժեշտ գործիքակազմ և կարող է ԵՊՀ ԻՄ-ի դասախոսների վերապատրաստումը և որակավորումը իրականացնել այդ միջոցներով:

Որոշեցին

Որոշում 17/4

Հանձնարարել Ուսումնամեթոդական վարչությանը հստակեցնել առաջարկվող մասնագիտությունների ցանկը և ներկայացնել առաջիկա գիտխորհրդի քննարկմանը:

Ընթացիկ հարցեր

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կառուցվածքային փոփոխություններ կատարելու մասին ԵՊՀ ԻՄ –ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ հաշվի առնելով աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր իրականացնելու պահանջները, մասնավորապես ԵՊՀ ԻՄ – ում օտար լեզուների առավել արդյունավետ և խորացված ուսուցում կազմակերպելու նպատակով, առաջարկում է լուծարել ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնը և նրա հենքի վրա ստեղծել Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն, Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոն և Ռուսաց լեզվի և գրականության սեկցիա, իսկ Կիրառական արվեստի ֆակուլտետում գործնական պարապմունքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծել համակարգչային սրահ և ‹‹Դիզայն›› լաբորատորիա::

Որոշեցին

Որոշում 17/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Ներկայացնել առաջարկություն ԵՊՀ –ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանին.

1. Լուծարել ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնը,
2. Ստեղծել Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն,
3. Ստեղծել Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոն,
4. Ստեղծել Ռուսաց լեզվի և գրականության սեկցիա,
5. Կիրառական արվեստի ֆակուլտետի կազմում ստեղծել համակարգչային սրահ և ‹‹Դիզայն›› լաբորատորիա:

Արտահայտվեց - ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը: Նա հավանություն տվեց ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ հնչեցված առաջարկին և հավելեց, որ Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի, Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի, Ռուսաց լեզվի և գրականության սեկցիաի ստեղծումը կնպաստի համապատասխան լեզուների առավել խորացված և որակյալ ուսուցում կազմակերպելու գործընթացին: ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը կարևորեց նաև Կիրառական արվեստի ֆակուլտետում մասնագիտական առարկաների պատշաճ մակարդակով իրականացնելու հանգամանքը, որի համար համապատասխան գույքով և սարքավորումներով զինված ‹‹Դիզայն›› լաբորատորիայի և համակարգչային սրահի առկայությունը անհրաժեշտություն է:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հարություն Ալեքսանի Մարզպանյանի, Ռ. Մարկոսյանի, Ն. Խաչատրյանի ‹‹Միգրացիայի ռիսկերը և մարդկային

կապիտալի վերարտադրությունը›› համահեղինակային աշխատությունը հրատարակության երաշխավորելու մասին ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը 13.05.2016թ. կայացած նիստում որոշում է կայացրել դիմել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին ‹‹Ընդհանուր տնտեսագիտություն›› ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հարություն Ալեքսանի Մարզպանյանի, Ռ. Մարկոսյանի, Ն. Խաչատրյանի ‹‹Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը›› համահեղինակային աշխատությունը հրատարակության երաշխավորելու համար: Ձեռնարկը գրված է հայոց լեզվով: Տվյալ աշխատությունն ունի գիտագործնական նշանակություն և իր հարցադրումների բնույթով նորույթ է հետազոտվող հիմնախնդրի ուսումնասիրության ոլորտում:

Ներկայացված ձեռնարկը գրախոսվել է ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի դոցենտ, տ.գ.դ. Արմեն Հակոբյանի և Հյուսիսային համալսարանի ‹‹Տնտեսագիտություն և կառավարում›› ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արմեն Ճուղուրյանի կողմից:

Արտահայտվեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Հ. Ա. Մարզպանյանը:

Հ. Մարզպանյանը նշեց, որ միգրացիայի ռիսկերի և մարդկային կապիտալի վերարտադրության բազմաշերտ փոխառնչությունների ուսումնասիրության հիման վրա կատարվել են մի շարք եզրակացություններ և առաջարկություններ, որոնք կարող են օգտագործվել ՀՀ-ում ըստ թիրախային խմբերի մարդկային կապիտալի նպատակաուղղված

վերարտադրության ճանապարհով միգրացիոն հոսքերի կարգավորման գործընթացում:

Ն. Խուդավերդյանը նշեց, որ կատարված աշխատանքը բավականին ինքնատիպ է, իրականացվել է ինչպես տեսական նյութի ուսումնասիրության, այնպես էլ խորքային հարցազրույցների արդյունքների հիման վրա: Ուշադրության են արժանի հեղինակների կողմից ՀՀ-ում առկա միգրացիոն ռիսկերի գործոնային վերլուծության արդյունքները, որոնք շաղկապված են սոցիոլոգիական հետազոտությունների հետ: Գիտագործնական նշանակություն ունեն նաև մարդկային կապիտալի երիտասարդացման հիմնախնդիրներին ուղղված առաջարկությունները, որոնց գործարկումը կնպաստի ՀՀ-ում մարդկային կապիտալի վերարտադրության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև միգրացիոն ռիսկերի կառավարման իրատեսական որոշումների կայացմանը:

Որոշեցին

Որոշում 17/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Երաշխավորել հրատարակության ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հարություն Ալեքսանի Մարզպանյանի, Ռ. Մարկոսյանի, Ն. Խաչատրյանի ‹‹Միգրացիայի

ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը›› համահեղինակային աշխատությունը:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ մանկավարժական գիտությունների թեկնածու Վահագն Վարազդատի Գրիգորյանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Երջանիկի Ոսկանյանի ‹‹*ՀՀ տնտեսական աշխարհագրություն*›› ուսումնական ձեռնակի հրատարակության երաշխավորելու մասին գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնը 02.07.2016թ. կայացած նիստում որոշում է ընդունել դիմելու ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին ‹‹Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն›› ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Վահագն Վարազդատի Գրիգորյանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Երջանիկի Ոսկանյանի ‹‹ՀՀ տնտեսական աշխարհագրություն›› ուսումնական ձեռնակը հրատարակման երաշխավորելու համար: Ձեռնարկը գրված է հայոց լեզվով: Տվյալ աշխատանքը կարող է ծառայել որպես ուսումնական ձեռնարկ բուհերի ‹‹Սերվիս›› և ‹‹Զբոսաշրջություն›› մասնագիտությունների ուսանողների և այդ ոլորտների աշխատողների համար: Այն կհամալրի հայերեն լեզվով մասնագիտական գրականության պակասը:

Ներկայացված ձեռնարկը գրախոսվել է ամբիոնի առաջատար դասախոսների կողմից:

Արտահայտվեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը:

Նրանք կարևորեցին ‹‹Սերվիս›› մասնագիտությամբ ուսանողների և դասախոսների համար ՀՀ տնտեսական աշխարհագրության ոլորտում հայերեն լեզվով մասնագիտական գրականությամբ համլրելու փաստը:

Որոշեցին

Որոշում 17/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Երաշխավորել հրատարակության ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Վահագն Վարազդատի Գրիգորյանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի վարիչ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Երջանիկի Ոսկանյանի ‹‹ՀՀ տնտեսական աշխարհագրություն›› ուսումնական ձեռնակը:

Ամփոփելով նիստը՝ ԵՊՀ-ի ռեկտոր պարոն Ա. Սիմոնյանն իր գոհունակությունն արտահայտեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման տեմպերից, ուղուց, ղեկավարությունից, կոլեկտիվից՝ բարեխղճորեն ու բարձր

պատասխանատվությամբ իրականացվող աշխատանքի համար, հավաստեց, որ Մայր բուհն այսուհետև էլ կշարունակի աջակցել մասնաճյուղին՝ իր մրցունակությունը պահելու, շարունակական առաջընթաց ապրելու գործում:

Գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ